ՄԱՍԵԱՑ ԱՂԱՒՆԻ

ԱՒԵՏԱՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՎԻՃԱԿԻՍ ՀԱՅՈՑ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ.

Կերչի Աղթամանոցին քահանայն՝ Էլմասեան Տէր Աւետիսը Հրաման խնդրած էր վիճակային իշխանութենէս որ իւր տկարութեանը պատճառաւ ուրիշ քաղաք փոխադրուի։ Առաջնորդական Ատեանս իրեն պարտք ճանչնալով ամենայն զգուշութիւն եւ շրջահայեցութիւն ի գործ դնել՝ երբոր հարկ լինի տեղափոխութիւն ընել ծխատէր քահանայից, հարկ համարեր էր որոշել որ Կերչի քահանայն առ այժմ փոխադրուի Հին Խրիմ քաղաքը, որոյ բարեխառն օդն ու ջուրն եւս կրնային օգուտ ընել նորա տկարութեանը։ Բայց նա քանի մը անհիմն պատճառներով — որ յայտնի են Առաջնորդական Ատենիս — բոլորովին այս վիճակէս ելնելու մտքով, առանց օրինաւոր հրամանագրի եւ անցագրի մեկնեցաւ Կերչէն դէպ ի Թաման, եւ անկից առ ժամս յայտնի չէ ուր գնացածը, ան-

digitised by A.R.A.R.@

խնամ ձգելով ի Կերչ երիցակինն ու զաւակները ։ — Էլմասեան քահանային այս պախարակելի գործողութիւնը արդէն Առաջնորդական Ատեանս շրջաբերական հրամանագրով ծանոյց վիճակիս ամէն հոգեւորական կառավարութեանցը եւ քահանայից, որպէս զի ըստ եկեղեցական կանոնաց եւ ըստ քաղաքական օրինաց՝ չընդունուի նա առ այժմ իբրեւ օրինաւոր քահանայագործութեան իշխանութիւն ունեցող. միանգամայն եւ Ս. Էջմիածնայ Սինհոդոսին ծանոյց, որ պատշաճ երեւցած տնօրէնութիւնն ընէ այն քահանային ապագայ վիճակին համար ։

Տէր Միքայէլեան Պարոն Բարսեղ Ախըլցխացի աստիճանաւորը, որ երեք ամիս առաջ նշանակուած էր Ատենադպիր Առաջնորդական Ատենիս, իւր անձնական տկարութենէն եւ ընտանեկան հանգամանքներէն ստիպեալ՝ հրաժարեցաւ պաշտօնէն կամաւորապէս, եւ դարձաւ իւր հայրենիքը ։

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ՄԵՐ ՏՂԱՔԸ ՅԵՏՈՅ Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԼԻՆԻՆ.

Այս հարցմունքը կընեն մեզի շատ անգամ այն խնամոտ եւ ճշմարտապէս որդեսէր ծնողք որ ուսման յարգը ճանչցած լինելով՝ որը շատ որը քիչ, իրենց զաւակաց կրթութիւնը մեզի կյանձնեն ։ Դնեմք թէ Խալիպեան ուսումնարանը շատ աղէկ՝ շատ գովելի է կըսեն. կարգերը կանոնները շատ խելացի, վարժապետներն ու վերակացուները շատ ընտիր, աշակերտաց հագուստները վայելուչ, կերակուրները չափաւոր, նայուածքը հայրական . . . ասոնք ամէնն ալ աղէկ. բայց ետքը ետքը ինչ պիտի լինին մեր տղաքը, այսինքն ինչ վիճակի՝ ինչ հացի տէր պիտի լինին որ արժէ մեր իրենց համար մինչեւ ցայժմ ըրած կամ այսուհետեւ ընելու ծախքին ։

Եթէ Խալիպեան ուսումնարանը բազմարուեստական դպրոց (école polytechnique) մը լինէր, կամ թէ մասնաւոր արհեստի եւ կամ մասնաւոր գիտութեան յատկացեալ դպրոց, յատկական դպրոց (école spéciale), կրնայինք ի հարկէ պատասխան տալ այս հարցման թէ պարոն, ձեր որդիքը այս ուսումնարանէս պիտի ելնեն կատարեալ քաղաքական ճարտարապետ (архитекторъ), կամ զինուորական ճարտարապետ ուղեգործ եւ կամրջաշէն (инженеръ), կամ մեքենագործ (машинистъ), կամ դիւանագէտ (дипломатъ), կամ զինուորական՝ կամ եկեղեցական, կամ գէթ աստիճանաւոր (чиновникъ) ։ — Ուրեմն ինչ պիտի լինին մեր տղաքը, Խալիպեան ուսումնարանէն ելնելէն յետոյ ։ — Որովհետեւ Խալիպեան ուսումնարանը այդպիսի գիտութեանց եւ արուեստից եւ վիճակաց մէկուն կամ մէկալին համար յատկացեալ ուսումնարան մը չէ, կարելի չէ առ այժմ պահանջել որ անկից ելած աշակերտը արդէն այդ ուսմանց եւ արուեստից մէկուն տիրացած գտնուի իսկոյն. հապա անոր սովրեցուցածները միայն այնպիսի ուսմունք են եւ այնպիսի ոճով կսովրեցունին որ այն գիտութեանց եւ այն վիճակներէն որուն ալ որ ցանկայ աշակերտը, եւ միջոց ունենայ հետեւելու, կարողանայ հասնիլ ժամանակով ։

Այս մեր պատասխանը կարժէ որ քիչ

digitised by A.R.A.R.@